

## **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/4**

**3 փետրվարի 2017թ.**

Քննարկվեց Ա/Ձ Ստեփան Ստեփանյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ 08.12.2016թ. թիվ 7160025 ակտի դեմ:

#### **Ա/Ձ Ստեփան Ստեփանյանի գանգատում բերված փաստարկները.**

Ա/Ձ Ստեփան Ստեփանյանը հայտնում է, որ առարկում է ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ կողմից 08.12.2016թ. կազմված թիվ 7160025 ակտին, քանի որ սխալը կատարվել է Մաշտոցի ՀՏ-ի կողմից: Միաժամանակ, շրջանառության հարկի հաշվարկի 7.4 տողում նշված ամբողջական, վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների գծով կատարված ծախսերի գերազանցող մասը՝ 2.232.022 դրամը, տվյալ եռամսյակում ՀՀ ներմուծված ապրանքների գումարն է, որի համար հաշվետու ժամանակաշրջանում ներկայացվել է հաշվետվություն, որը հաստատվել է Մաշտոցի ՀՏ կողմից:

#### **ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ 18.11.2016թ. կամերալ ուսումնասիրության արձանագրությունը կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ 08.12.2016թ. թիվ 7160025 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ): Ակտով մասնավորապես արձանագրվել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ կողմից կատարված համադրումների արդյունքում պարզվել է, որ 2016թ. 3-րդ եռամսյակի համար ներկայացված շրջանառության հարկի հաշվարկի 7.4-րդ կետում նշված անմիջական վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների գծով կատարված ծախսերը էականորեն գերազանցում են հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա ՀՀ օրենսդրությամբ սահմանված երկկողմանի հաստատված (վավերացված) հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված ծախսերը (ներառյալ անուղղակի հարկերը), ՀՀ ներմուծված ապրանքների մասով ներմուծման հայտարարագրերում արտացոլված մաքսային արժեքի և հաշվարկված անուղղակի հարկերի հանրագումարը կամ ավելացված արժեքի հարկով հարկման բազայի ու հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների հանրագումարից 2.232.022 դրամով, որի արդյունքում պակաս է հաշվարկվել շրջանառության հարկի գումար 89.281 դրամի չափով: Արդյունքում հիմք ընդունելով «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի դրույթները լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 187.490 դրամ:

Տվյալ դեպքում Ակտով 187.490 դրամի չափով լրացուցիչ պարտավորության առաջադրման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Ա/Ձ Ստեփան Ստեփանյանի կողմից 2016թ. 3-րդ եռամսյակի համար ներկայացված շրջանառության հարկի հաշվարկի 7.4-րդ «Հաշվետու եռամսյակում ապրանքների ձեռքբերման ծախսերի գումար» տողում արտացոլված գումարում՝ 3.207.022 դրամի չափով,

2.232.022 դրամի չափով ծախսերի վերաբերյալ տվյալներ հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա չեն եղել:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Ա/Ձ Ստեփան Ստեփանյանի կողմից 14.07.2016թ. Ռուսաստանի Դաշնությունից ներմուծվել են ապրանքներ, որոնց վերաբերյալ 04.08.2016թ. սահմանված կարգով ներկայացվել է «Ներմուծման հարկային հայտարարագիր»:

«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1.1-րդ կետի համաձայն՝ հաշվետու ժամանակաշրջանի համար առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտների մասով հաշվարկված շրջանառության հարկի գումարը նվազեցվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում անմիջական վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների գծով կատարված ծախսերի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված երկկողմանի հաստատված (վավերացված) հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված ծախսերի (ներառյալ՝ անուղղակի հարկերը), ինչպես նաև ՀՀ ներմուծված ապրանքների մասով ներմուծման հայտարարագրերում արտացոլված մաքսային արժեքի և հաշվարկված անուղղակի հարկերի հանրագումարի կամ ավելացված արժեքի հարկով հարկման բազայի ու հաշվարկված ավելացված արժեքի հարկի հանրագումարի (այսուհետ՝ ապրանքների ձեռք բերման ծախսեր) 4 տոկոսը կազմող գումարի չափով:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Ստեփան Ստեփանյանի կողմից ներկայացված ներմուծման հարկային հայտարարագրում արտացոլվել են վերոգրյալ ներմուծման գործարքից առաջացած ավելացված արժեքի հարկով հարկման բազայի ու հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարները, որոնց հանրագումարը կազմում է հենց Ակտում նշված 2.232.022 դրամը (1.860.019+372.003): Այսինքն, գործում առկա ապացույցները հիմնավորում են Ակտով արձանագրված խախտումը հիմնավոր չլինելու հանգամանքը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Չ Ո Ս Է՝**

Անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ 08.12.2016թ. թիվ 7160025 ակտը:

**Հանձնաժողովի նախագահ**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**